ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Զեզ եմ ներկայացնում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գնումների համակարգման բաժնի փորձագետ Լիանա Մկրտչյանի 01.04.2023-11.07.2023 թթ. ժամանակահատվածի համար կատարված աշխատանքների վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝ Ք. Մայիլյան

12.07.2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՑ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.04.2023- 11.07.2023 թթ. ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից գլխավոր քարտուղարի և /կամ/ բաժնի պետի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի չկայացած չափաբաժինների վերահայտարարում, ամփոփում /թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/8-ԵԽ-5» «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/8-ԵԽ-6» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/8-ԵԽ-7» ծածկագրերով գնման ընթացակարգեր/:
- Նախարարության 2023 թվականի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի վերահայտարարում և ամփոփում /թիվ «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-23/15-6» ծածկագրով գնման ընթացակարգ, վերահայտարարվել է թվով 6 անգամ/:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ (Սամաղար) համայնքում գնված առանձնատան հիմնանորոգման շինարարական աշխատանքների «գնանշման հարցում» գնման ընթացակարգի վերահայտարարում, ամփոփում / թիվ ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-23/24-1 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն/:
- Հիմնանորոգման շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով

հայտարարվելիք գնման ընթացակարգերին առնչվող փաստաթղթերի կազմում, շրջանառում /գնումների պլան, գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին հրաման, հրավեր/:

- Գնման ընթացակարգերի շրջանակներում կնքված պայմանագրերին կից կնքվելիք համաձայնագրերի կազմում, շրջանառում:
- ՊՈԱԿ-ների 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման վերահայտարարված գնման ընթացակարգերի հաղթող ճանաչված կազմակերպության /«ԹԵՅՍՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ/ հետ կնքված Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու, ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու և հայտի ապահովման գումարները գանձելու վերաբերյալ ընդունված որոշման արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատական նիստերին մասնակցության ապահովում:
- Վերոնշյալ որոշումը Նախարարությունը ընդունել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության և Պայմանագրի 8.15-րդ կետի, պահանջները /որպես ընտրված մասնակից ընկերությունը հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, սահմանված ժամկետում երաշխիքների հետ միասին չի ներկայացրել ստորագրված համաձայնագրերը/:
- ՊՈԱԿ-ների կողմից լրամշակված սննդամթերքի, հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների տեխնիկական բնութագրերի վերանայում:
- Դրամաշնորհների հատկացման նպատակով մրցութային հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը և դրամաշնորհի հատկացման ընթացակարգը հաստատելու մասին հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանների նախագծերի կազմում, շրջանառում:
- Դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձևով

տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին ամենամսյա ամփոփ արձանագրությունների կազմում, ներկայացում հաստատման:

- Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով մակագրված հանձնարարականների կատարում, գրությունների կազմում, շջանառում:
- Գնման ընթացակարգերի հայտարարության տեքստերի /հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով/, գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանների, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի նախագծերի կազմում և ներկայացում հաստատման:
- Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին մեթոդական օժանդակության ցուցաբերում՝ էլեկտրոնային եղանակով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու, գնման հայտերում արձանագրված անճշտությունները շտկելու, գնումների մասին ՀՀ օրենսդրության հետ կապված այլ հարցերի մասով:
- Գնման ընթացակարգերի հայտարարման նպատակով աշխատակարգային տվյալների մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ, անցում կատարելով eauction.armeps.am կամ armeps.am համակարգեր:
- Կազմակերպված գնման ընթացակարգերի փաստաթղթերի հրապարակում գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Գնումների համակարգման բաժնի փորձագետ — [signature] — Լ. Մկրտչյան

12.07.2023թ.

փորձագետի գնահատում՝
ԱԱՀՆ գնումների համակարգման բաժնի
փորձագետի աշխատանքները գնահատում եմ
գերազանց [signature]